

ԱՂԵՔՍԱՆ ԴՐԻ ԿՍԷՆ

Կէր չ'կէր մէկ թագաւորմ, մէկ լաճ, մէկ կնիկ:

Լաճու անունն Աղէքսանդր էր: Դօրիս էդա Աղէքսանդր թագաւորու մէրը մեռաւ. թագաւոր կնաց ուր խամար խորթ կնիկմ իպի: Դօրիս օրմ ինոյք, ուր լաճ, ուր կնիկ նստեր ին մէջ ինոնց խաս պախչին. մէկ էլ տեսան իրեյք խատ եղունիկ (աղաւնի) էկան պլլլացին:

Թագաւորը ասաց. Կնիկ, խողէ (երանի թէ) մենյք իսոնց լէզուն խասկնինք. խենյք լի՛նչ կասէն:

Աղէքսանդր ասաց. Պապօ, ես կիտեմ: Ասաց ինչ կասեն: Աղէքսանդր ասաց՝ կասեն, ժամանակմ Աղէքսանդր պիտի էլնի թագաւոր, ինոր մէրը ջուր պիտի լցի վէր ձեռաց, խէրը փէշկիւր (ղենջակ) տը թալի:

Մէրը ասաց. Տես, տես. լի՛նչ կեղտոտ մի, ինչ պաներմ կը մտածի. սաքիյ, լի՛նչ ի, ես տը ջօջանամ իմ խօր տեղ տը էլնիմ թագաւոր, իմ խէր մէրը անեմ ձիկ խզմաթքեար (ծառայ):

Թագաւորն էլ ասաց՝ կնիկ, էնիկ ճիժ ի. էն ինչ կիտի էտսկնայ (այդպէս) բաներ: Չէ, չէ, ասաց մէրը. ես կիտեմ էն ինչ հէթիմ ի: Կնիկն էր, էտա խօսք արաց ինոր աֆքեար (մտածմունք): Մնաց չիւր ամառ. օրմ թագաւորուն ասաց. ես տը էրթամ ծովի հափ կանգեամ. տղէն դիր խըձիկ ես կարիպ եմ. մէ քիչ կանգեամ:

Կնիկն էր էլաւ առաւտուն չարշաւ (էհրամ) էթալ, կնաց մէմարանկօղի (կահագործ) քովէն (մօտ) ասաց՝ առա քեյ ոսկիմ, մէ խօրօտ սանդղիմ առ, արի ծովի հափ մօտ ձի: Մարանդօղ (կահագործ) էլաւ շոտմ սնդուկ շինեց, դարպար թամաշա արաւ, տուեց ուր ուշաղի (ծառայի) քեամակ, տարաւ ծովի պէրան, էտու էդա կնկայն:

Կնիկը իպէ էտա լաճ, պստիկ էր ճիթեց մէջ սանդղիւն. պերանը պըվըռնեց, էթալ վէր ծովու հերեսին, ասաց. Դէ, կնակ,

խեմ (նայեմ) ինչիս մե տը անես քեյ ծառայ, տիւ էլ տը ըլնես թագաւոր:

Մոգն էր էտա սնդուկ տարաւ, տարաւ Չինմաչինու թագաւորի երկիր էխան տիւ:

Էդա տեղ գեամիչիմ (նաւաւալ) իրե ծովի հափ, սնդուկը կնտաւ. էպնց, տեսաւ մէ խօրօտ լաճմ. ասաց. Փառք Աստծու, թէ Աստուած ձի լաճմ էտու, խէրիքիյ, լաճ չկէյր ձի Առեց ուրախ ուրախ կնաց ուր տուն: Լաճն էր ժամանակմ մնաց. ճօչացաւ մնաց. էդա Չինմաչինու թագաւորու գեամչու տան: Էտա թագաւորու պատնի պատի վրէն իրէյք ամիս կէս, իրէյք խատ կռիկ, առուտոմէ կը գեէն, չիւմ իրիկուն կը կռէն, կը թռնէն. կէրթէն, մէկէլ օր էլմէլ կըգեէն:

Էտա թագաւոր դալալ (մունեալիկ) իտու կանչել, ասաց՝ գեալօ. (ժողովուրդ) վով որ գեա. էսա խաւքեյրաց լեզուն խասկանայ, ինչ որ ուզի. ես կտամ ինոր: Էդա գեամըչին էր, ինոր խորթ խէր, էկաւ տուն. կսա արաց. լաճը ասաց. Պապօ, էտա խաւքեյրաց լեզուն կը խասկնամ, ես վաղ տը գեամ, ասեմ. չէ ասաց՝ որդի, տիւ չես կիտի ինոնց լեզուն, դօրիս թագաւորը քեռ վիզը տը կտրի: Չէ, ասաց՝ պապօ, Չայնամ թօ իմ վիզը կտրի: Տղան, ասաց՝ մանի, մ'էլնի, Աստուած ջորով քեյ տուերի ձի՝ մը էթա:

Առաւտուն էր. թագաւորու դալալը էլմ էլ էլաւ կանչեց, լաճը լսաւ, էլաւ վաղեց կնաց թամանդէմ (բարե) արաց, թագաւորու յետե կայնաւ: Թագաւորն ասաց՝ հը, խէր ըլնի. խօրօտ լաճ, ի՞նչ կայ, ինչի՞ ես իկե: Ասաց. Իկեր եմ որ խաւքեյրաց լեզուն ի՞նչ ի քեյ ասեմ: Ապա տիւ վի՛ր լաճն. ես, ասաց ես գեամչու լաճն եմ: Ասաց՝ արի՛ կաց ըստեղ:

Առաւտուն կռիկներ (ազաւ) էկան էլմ էլ կռացին. թագաւորը խառցուց, ասաց՝ խօրօտ տղա, ինչ կասեն էսա խաւքեյր: Ասաց՝ թագաւոր ապրած կէնաս. էսա մէկը իրիկն ի, էսա մէկը կնիկն ի, էսա մէկն էլ ինոնց ճեառն ի: Էսա մէրը ասաց՝ որ ճեառ էխան, դօրուս մէր ուր ճեառն է թօղ, կնաց ուրիշ երկիր, էտա թմայնգ ժամանակ, էտա խէր մնաց վէր էտա ճիտուն, շախեց, պախեց, չիւր խացի խասաւ: Որ խացի խասաւ, էլաւ էկաւ էլաւ ճեառուն տէր, ասաց՝ էդա իմ ճեառն ի, ձի կըխասնի:

Նէր ասաց՝ Չանըմ թմնկ ժամանակ տիւ թողիք փախար, ես խաց ճառեցի, մորացի իմ ճեառ շախեցի, չիւմ նոր խասաւ խացի. մկա տիւ էկաւ էլար ճեառուն տէրը:

Մէրը կասի՝ խն իմն ի, չէ Չանըմ իմ ձուն ի, ես իմ ածե. քեյ ի՞նչ կա ինե, ես իմ խանի, ձի կըխասնի:

Նէրը կասի, Չանըմ տիւ խանիր, ամա քեռ ձիւն ի, ալա ա-

նօթի կըխատնէր:—Թող խատնէր, թօ տիւ չըշախէր, իմ ճետն ի ձի կըխասնի:

Ուէրն էլ ասաց՝ որ սկսն ի, արի էրթանյք մօ թագաւոր, տիսնայն դադաստան վիւր տը տայ, եան քեյ տը տայ, եան ձի:

Մկայ՝ թագաւոր ապրած կէնաս, տիւ տը տաս մօճ՝ թէ խօր, զէ դադաստան արա:

Թագաւորն ասաց՝ ջանըմ, տղէն որ կայ՝ խօր կըխասնի. խասմա (մանաւանդ) որ սա թանդ ժամանակն էլ շախեր ի, խօր կը խասնի: Էս ասելուն պէս, խէրը ճետը թռան կնացին Էնա մէկ կողմ. մէրը մէնակ թռաւ կնաց Էնա մէկ կողմ: Թագաւորն էր, էդա լաճու եախէն պոնեց, ասաց՝ խօրօտ լաճ, քեո անուն Բնչ ի, ասաց՝ Աղէքսանդր: Էյ ասաց թագաւոր. արի սաղին (ուղիղն) ասա, տիւ էսա թագաւորու լաճ չեա: Տիւ արի սաղին ասա, ես եմ մէկ աղչի. էն էլ կուրպան կանեմ քեյ, իմ թագաւորութեն կըմնայ ձե երկսին: Տիւ գեամչիւց Բնչ կըխասկընաս:

Ասաց՝ թագաւոր ապրած կենաս, սաղ որ կուգես խասկնաղ, ես էլ չըմ կիտի, ես վիւր լաճն եմ. ես գեամչու լաճ չեմ, ես ձի ըստեղն եմ տիսե. ձէտիկ (յետոյ) թագաւորն իպէ Աղէքսանդրին արաց ուր խոգեղաւակ. ասաց՝ չիւմ ճօճանայ իմ աղջիկը պսակեմ էնոր վրէն:

Աֆանդըմ, թագաւորն էր, իպէ Աղէքսանդր եօթ տարի իտի դպրոց: Էնպէս իմաստութեն սորվաւ որ մատով շանյք կտէն:

Թագաւորն էն Աղէքսանդր վարժատնէն էխան իպէ տուն. ասաց: Պօրիս քեյ տը կարգեմ (պսակեմ) Աղէքսանդր: Ասաց՝ չէ թագաւոր, քեյղինց մէ պան խնդրեմ ալա. տիւ թօնիս ես էրթամ Բաղդատա Բալուլի առջև տաս առնեմ, նոր գեամ, ինչ կանես արա, կպսակես պսակի:

Ասաց՝ տղա, կէրթաս, ալա վախենամ Էնտեղէն փախնես էրթաս: Չէ, ասաց, պապօ, ոչ խէր ունիւմ, ոչ մէր, տեղ չըմ էրթայ: Էլաւ գիյըմ գյրեց խոու Աղէքսանդրին. գյրեց շատ պարե Բաղդատա Բալուլին. որ իմ տղէն Աղէքսանդր խրկեցի քեո մօտ որ դան տաս:

Աղէքսանդր տարաւ թուղթ խոու Բաղդատա Բալուլ թագաւորու ձեռ, ետ կայնաւ. թագաւոր կարդաց, ասաց՝ իմ իրեյք տարի տիւ դաս առ, նոր կնա: Աղէքսանդր էլ առաւտուն կընէր ջուր կըտանէր Բաղդատա Բալուլին կըվացվէր. Էնտեղից ջուր կը տանէր Բալուլին աղջկան, էն էլ կվացվէր. խաց կըտանէր Բալուլին, Էնդուց աղջկան, յետոյ կը գէէր ուր դասը կառնէր, որ հալի (վերջապէս) տարիւմ մնաց Էնտեղ, ուր ուսումը առեց:

Ձինմաչինու թագաւորուն էլ լաճմ կէր, անունը Լութֆիկ

էր. էն էլ էլաւ գիրում գրեց իտու ուր լաճուն, ասաց՝ կ'նա Բալու թագաւորու մօտ, իրեյք տարի դաս առ արիւ էս էլ էլաւ էկաւ Բաղդադու Բալուկի մօտ: Լուծֆիկն էլ ուր թուղթ տուեց. Բալուլը կարդաց: Գրէր էր. շատ պարև Բալուկին. իմ լաճ Լուծֆիկին խօրօտ դաս տան, իրեյք տարից վերջ օրօխկես գեա: Բաղդադու Բալուկն ինորն էլ ընդունեց: Այա Լուծֆիկ, Աղէքսանդր ըսկուն մէկ նմուշ էն, որ մարդ չըր կանայ ճանչնայ: Իպե մէկին կարմիր խալաւ խագիւց, մէկին սիւլտակ: Ըսկում կանէր որ ճանչնէր:

Ինչ Լուծֆիկն էր դայիմ կըմէր վարժատուն, ինչ Աղէքսանդրն էր առաւտուն կէրթէր խաց կըտանէր Բալուկին. էնդուց Ֆէլօրին, նոր կուգիէր Լուծֆիկի խետ դաս կառնէր:

Էդա մէկ օր Աղէքսանդր քիչմ խիվընդացաւ:

Ասաց. Լուծֆիկ, իմ խալըֆներ խագի, խաց տար Բալուկին թօ ուտի, էնդիւց էլ տար Ֆէլօրին, թող արի, մենյք ախպէր ենք: Աղէքսանդր մնաց տուն. Լուծֆիկ խագեաւ Աղէքսանդրի խալըֆներ, էլաւ խաց տարաւ Բալուկին, էնդուց էլ Ֆէլօրին. դէլ դուռը չըր պացէ, ինչ աչք ընկաւ Ֆէլօրի յերես. խելք կնաց, մէյ դիւ փոքաւ գէյտին՝ չանախ կոտրաւ. Ֆէլօր խասաւ մի քիչ շուր տփեց յիրես, խելքն էկաւ վրէն, էլաւ եթօղ կնաց:

Ֆէլօր խասկացաւ որ էսա Աղէքսանդր չէր, ապա Լուծֆիկն էր: Ապա էլաւ կնաց մօտ Աղէքսանդր ընկաւ վէր քիյթ մօթին, էլաց: Աղէքսանդրն ասաց՝ էյ Լուծֆիկ, քեյ ինչ էլաւ, ասաց՝ չըմ գիյտի, եա Ֆէլօրի խօսք եմ կանես մէկ, եա չէ ես կմեռնեմ, չարայ չկայ:

Տղան, ասաց, էդա պան մ'անի. մենյք ինոնց խաց կուտենյք, մեր խացին մանա (պատճառ) մ'էլնի: Չէ կառի՝ եա տը ըլնի, եան չիօ ես կըմեռնեմ:

Աղէքսանդր էլաւ կնաց մըջ քեաղքիյն տաս ոսկու գինդ առեց, էկաւ ասաց՝ պալթի (իցէ թէ) պանմ անեմ. դօրս էտա գընդներ տարաւ իտի յառջև. խէտ իդի առջև. ասաց տէ, տիւ իմ ախպէրն ես, թէ չէ ուրիշ մարդ ըլնէր, վով կիտի, ինչ տը խանէ ինոր գլօխ: Տիւ թնչ ի կանես. եռանդ (էրէկ չէ առջիօր) տիւ էլար ինոր օրօխկեցիր ստեղ. խելք կնաց, ինգեաւ ստեղ, որ իմ խէր տեսնէր, թնչ տը խանէր իմ գլօխ, տը ասէր չիօ ինոր մատ կայ խետ: Ձըլնեմ չիմանամ, տիմէլ (անգամ ես) էն օրօխկես մօտ ձի:

Ասաց. էլ ձի տավի չկայ, ինոր մեղք քօ վիդ, նա կասեմ արա, նա կասեմ մ'անէ, դօր տիւ կիտես:

Էլաւ էթօղ էկաւ մօտ Լուծֆիկ, ասաց. Տղան Լուծֆիկ:

մանի մէջնե էդա սանդից (դիտաւորութիւն) վազն արե (հեռացիր):

— Զէ՛ չըլի, կը մեռնեմ, ասաց Լուսթիկ:

Գօրես ուստուն էլալ ոսկի պլազուկ (պարանշան) առեց, կնաց մօտ Ծօրէն, դարաւ էդի առջև. էլմէլ Ծիւօր ասաց. Աղէքսանդր մանե, մէջնե. էդա պանից վազն արե. որ տիւ չըլնիր, էնոր խաղը կանէ (խայտառակ), որ իմ խէր լսնի, քէյ էլ ձե էլ կապանի:

Ծ Ի Ս Ա Կ Ա Ն Կ Ա Ր Գ Ե Ր Ը

Հ Ա Յ Ո Ց Մ Է Ջ

Ն. ԼԼԼԸՅՆԱՆԻ

Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Մ Ք

Ծանկանալով վերջնական կորստից ազատել հայ ազգազրու-
թեան վերաբերեալ նիւթերը, ես երկիւղ կրեցի, թէ մի գուցէ
աչքիցս խուսափեն շատ ծէսեր և սովորութիւններ, որոնք թէ-
պէտ անշան, աննկատելի են, սակայն ուսումնասիրութիւնների
համար անհրաժեշտ են, ուստի և՛ որոշեցի ինձ առաջնորդ ընտ-
րել անգուգական Հերբերդ Սպենսերի առ այժմ «Institutions ce're-
monielles» ուսումնասիրութիւնը, պատրաստեցի մանրամասն
ծրագիր՝ հարցերով և այս նպատակով ճանապարհորդեցի Ալէք-
սանդրապօլ, Կարս, Կաղզուան, Հին-Նախիջևան, Երեան, Վաղար-
շապատ և հաւաքեցի բաւականաչափ նիւթ, որը լրացրի Վաս-
պուրականում ճանապարհորդելիս և Անդրկովկասի գաւառներում
արդէն հաւաքած նիւթերովս Այս իմ անձնական հաւաքածուի
վրայ աւելացրի հայ ազգազրութեան և հայ հին մատենադրու-
թեան մէջ եղած ցրուած նիւթերը և կազմեցի ներկայ երկը, ուր
նիւթերը հայկական են, իսկ ծրագիրը և լուսարանութիւնը ամ-
բողջովին Հ. Սպենսերին: Մի քանի տեսութիւններ միայն, որ-
ոնք ինձ համար լիովին ընդունելի չէին թւում, ես լուսթեամբ
անցայ: Քանի որ ուսումնասիրութիւններ կատարելու համար
երբէք ժամանակ չի պակասելու, մինչդեռ եթէ մի քառորդ
դար էլ անտարբեր գտնուենք հայկական նիւթերը հաւաքելու՝ շատ
ու շատ նիւթեր բոլորովին անհետանալու են, ուստի իմ անմի-
ջական նպատակը զի թէ ուսումնասիրութիւն տալն է, այլ եւ-
րոպական ուսումնասիրութեան լուսով հայկական նիւթերը որոնել,
գտնել և կորստից ազատել: